



ՊԵՏԵՕՖԻ*)

ՓԵՌԵՒՈՐ ՄԱՀ

Միայն մէ՛կ միաք տանջում է ինձ ու մաշում,
Որ պիտ, մեռնեմ բարձերի վրայ անկողնում,
Թառամելով, ինչպէս ծաղիկ յուսահատ,
Որի արմաքը կրժում է մի որո՞վաւ。
Կամ, ինչպէս մոմ, հանգչեմ կամաց հալուելով,
Մենակ դատարկ սենեակի մէջ վառուելով:

Այդպիսի մահ չտաս դու ինձ, ո՛վ երկինք,
Այդպիսի մահ, որ ամօթ է, նախատի՛նք.
Թո՛ղ ես լինիմ ծառ խորտակուած կայծակից,
Կամ թէ հովառում արմատախիլ մրրկից,
Եւ կամ մի ժայռ, որ գազաթից մեծ լեռան
Որոտալով գլորվում է խոր դերեզման:

Երբ ամեն մի ստրուկ ժողովուրդ ծանծրացած
Լծից, մի օր կռիւ դուրս կըգայ լաւ դինուած,
Դէմքը կարմիր, ձեռին դրօշակը կարմիր,
Նրա վրայ փայլի այս նշանը ոսկեգիր.

*) ԱԼԷՔՍԱՆԴՐ ՊԵՏԵՕՖԻ, Հունգարացոց ամենամեծ քնարերգու բանաստեղծը ծնուել է 1823 թ. յունուարի 1-ին: Իբրեւ ջերմ և ոգևորուած հայրենասէր, նա, ի հարկէ, չէր կարող անտարբեր վրայ լինել և Հմասնակցել Հունգարացոց 1849 թ. մեծ ապստամբութեանը Աւստրիայի դէմ, և մտաւ ազգային զօրքի մէջ, քաջութեամբ կռուելով իւր հայրենիքի թշնամիների դէմ: Բայց նոյն թուականի յուլիսի 31-ին, մի արիւնահեղ ճակատամարտից յետոյ, 25 տարեկան ծաղկափթիթ հասակում, յանկարծ անյայտացաւ նա—ոչ ապանուածների մէջ գտնուեցաւ, ոչ էլ գերի ընկածների մէջ: Մ. Թ.

«Աղատութիւն»

Եւ ամեն տեղ բարձրածայն
 չնչէ այս կոչը միայն,
 Եւ բռնութեան դէմ կռիւ
 Մղեն քաշեր բաղձաթիւ.
 Ա՛յնտեղ կռուէի ընկնել,
 Մատաղ արիւնս թափել:
 Վերջին խօսքս խեղդեն թող
 Պատերազմի ուժգին փող,
 Եւ սրերի շառաչիւն,
 Եւ հրազենքի խուլ թնդիւն:
 Եւ թո՛ղ անեն ոտի տակ
 Երիւարներն իմ զիակ
 Երբ քաշերը չաղթութեան
 Լուրը տանել կը փութան:
 Թող, մինչ չաղթէ հալածուած
 Իրաւունքը, մնա՛մ ընկած,
 Եւ այն ժամանակ միայն
 Ոսկունքս ժողովեն,
 Երբ որ ընդհանուր թաղման
 Օրն առաջուց կորոշեն.
 Մեծ օրը, երբ հանդէսով,
 Տխրանուող երգերով,
 Եւ դրօշակը փաթաթած
 Առաջ շարժոււմ է կամաց
 Թաղման թափօրը ախուր,
 Որ իջեցնեն ընդհանուր
 Մէկ դերեզման միասին
 Բոլոր այն հերոսներին,
 Որոնք քեզ համար մեռան,
 Աղատութիւն սրբազան:

Թարգմ. Գէորգ Բարխուդարեանց